

Արդեն բավական ժամանակ է, ինչ Ստեփանակերտի մարզային կարի կոմբինատի կոլեկտիվն աշխատում է լարված պայմաններում: Այստեղ ամեն ինչ արվում է, որ բնակչությունը ժամանակին ստանա անհրաժեշտ կարքնամրթերքները:

Վլադիկ Սաֆարյանը, որին դուք տեսնում եք լուսանկարում, այստեղ աշխատում է ավելի քան երեք տարի: Այդ կարճ ժամանակամիջոցում փորձառու բանվորը հասցրել է յուրացնել այստեղ տեղադրված հունգարական սարքավորման գաղտնիքները: Դեռ չի եղել մի դեպք, որ արտադրամասը տեխնիկայի խափանման պատճառով պարապուրդ ունենա, ինչում քիչ ծառայություն չունի Վ. Սաֆարյանը:



Երկարատև գործադուլից հետո սկսել է աշխատել Երևանի «Գարուն» կարի արտադրական միավորման Ստեփանակերտի արտադրական կոմբինատը:

Աշխատանքի միայն երկու շաբաթվա ընթացքում այստեղ թողարկվել է ավելի քան 150 հազար ռուբլու ժողովրդական ըսպառման ապրանք:

Կոմբինատի ղեկավարությունը միջոցներ է ձեռնարկում նյութատեխնիկական հարցերի լուծման նպատակով:

ՆԿԱՐՈՒՄ. — Գալանտերեայի տեղամասի կարող առաջավոր բանվորուհի Սվետլանա Գաբրիելյանը:

Լուսանկարները՝

Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆԻ